| | | |
|---|---|---|
| ,, | Սիօյ Մարգարեան . . | 10 |
| ,, | Գրիգոր Վարդանեան . . | 20 |
| ,, | Եղսան Մարկոսեան . . | 20 |
| ,, | Գուլի Յարդենեան . . | 10 |
| ,, | Մաքոյ Պօղոսեան . . | 10 |
| ,, | Նունոյ Մարգարեան . . | 20 |

(Շարունակելի)։

Այս ցուցակն ի 1868 ամին կատարուած նպաստահաւաքութեան նուիրատուաց անուանց շարունակութիւնն է ի 1869 ամէ հետէ, ուստի կարեւոր համարեցաք ծանուցանել ամէն, որպէս զի սխալ չհասկնան։

Թէպէտ կարելի էր զայս առանձինն տպել և ուրոյն կազմել, այլ կանխաւ խոստացած լինելով, միանգամայն Արարատայ շատ էջերը չլցնելոյ համար սոյնը տակաւ առ տակաւ կշարունակուի և ի ներկայ ամի կատարուի։

## Ի Ս. ԳԱՅԻԱՆԷ ՎԱՆՈՒՑ.

Հայաստանի ամբողջ տարածութեան վերայ ցըրուած բազմաթիւ վանքերի հոյակապ աւերակները զարմացնումեն օտարազգի ճանապարհորդի աչքը, իսկ ազգասէր հայի սրտից ծծըումեն դառն հառաչանքներ Ազգի և Եկեղեցու փողանցիկ և նսեմացած փառքի և պայծառութեան մասին։ Այս վանքերը, համաձայն անցած դարերու ոգուն, կենդրոն էին ոչ միայն ազգային կրօնի, այլ և ազգային լուսաւորութեան, ըստ որում՝ սոքա պահեցին և մշակեցին ազգային լեզուն, սոքա ծաղկացրին ազգային մատենագրութիւնը, սոքա յառաջ բերին գիտնականներ, սոքա պահպանեցին ապագայ սերունդի համար անցած գնացած դարերու տարեգրութիւնները։ Բայց այժմ, — թշնամեաց բազմաթիւ չարաչար հարուածների շնորհիւ, ժամանակի ամենայն ինչ մաշող զօրութեան ազդեցութեամբ և դարուս գաղափարի ներգործութեամբ, — այդ վանքերը՝ թափուր իւրեանց շքեղ պայծառութիւնից՝ ներկայացնումեն սրտաշարժ աւերակներ, դառնալով միանգամայն վայրենի թռչունների ապաստան և բնակարան։ Ե՞ւ ո՞ր Հայ մարդ կարող է առանց տխուր հառաչանքի, առանց դառն արտասուքի նայել այդ աւերակների վերայ. ո՞ր Հայի գլխում չեն խառնվում խոկոյն հազար տեսակ մտքեր Ազգի անցեալի և ներկայի մասին, չեն զարթնում հազար տեսակ ցանկութիւններ վերանորոգել այդ աւերակները . . . . բայց որքան արագութեամբ ծնանումեն այդ մտքերը և ցանկութիւնները, նոյնպէս՝ արագութեամբ և անհետանումեն։ Հայ մարդը խօսքով սիրումէ արդարև հնութիւնը, միշտ պարծենումէ Հայկի, Արամի, Տիգրանի անուններով, միշտ գովումէ իւր հայրենիքի օդը, ջուրը, գեղեցկութիւնը, միշտ պատկառանքով պատմումէ իւր սուրբ և նուիրական տեղերի — վանքերի և եկեղեցիների — ճարտարապետական սքանչելի հոյակապութիւնը, բայց գործով նա չէ սիրում այդ հնութիւնը, նա ուշ և խնամք չէ դարձնում հնութեան մնացորդների վերայ, նա աւերակ է թողնում իւր ազգի և եկեղեցու հնադարեան կեանքի խորհուրդները։ Գուցէ ամաչումէ նա կամ երկիւղ է կրում հընամոլ կամ մոլեռանդ դառնալ․ բայց թո՛ղ չըլինի նա հնամոլ, այլ լինի հնասէր, այսինքն՝ հնութիւն սիրող, հնութեան մնացորդները յարգող։ Եթէ լուսաւորեալ Եւրոպացիք և մինչև անգամ նոյն տէրութիւնները, ոչ միայն իւրեանց ազգային պատմութիւնը, այլ և ընդհանուր մարդկութեան պատմութիւնը և կեանքի բազմակողմանի երևոյթները մշակելու նպատակով կազմումեն հնախուզական (արխէօլօգիքական) ընկերութիւններ, և մեծագումար ծախքեր անելով վերանորոգումեն հին երևելի վանքերի, պալատների, տների աւերակները, կամ փորելով հին գերեզմաններ և քանդելով հին տներ որոնումեն և ժողովումեն զանազան հնութիւններ և կազմումեն հնութեանց թանգարաններ, եթէ այդ լուսաւորեալ Եւրոպացիք՝ ի նկատի ունենալով այն մեծ ծառայութիւնը, որը ցուցին ընդհանուր լուսաւորութեան միջնադարեան վանքերը, և չնայելով իւրեանց կրօնական ազատամտութեան վերայ՝ պահպանումեն այդ վանքերից շատերը պայծառութեան մէջ, — ո՛րչափ մենք, Հայերս, առանձին խորին յարգանքով պիտի պատուենք մեր բազմորդիւն վանքերի յիշատակը և իբրև փոխարէն նոցա կողմից ազգին և եկեղեցուն ցուցած ծառայութեանց՝ կարողացածին չափ պայծառութեան մէջ պահպանենք գոնէ մնացած վանքերը, եթէ չենք կարող կամ

չենք կամենում վերանորոգել արդէն աւերակ դարձածները։

Ի նկատի ունենալով մի կողմից՝ Ս. Գայիանէի վանքի (Վաղարշապատում, Էջմիածնից շատ մօտ) պատմական նշանակութիւնը — ըստ որում այստեղ ամփոփուած են նշխարքները Ս. Գայիանէի և միւս երկու կուսի, որք Ս. Հռիփսիմէի և միւս ընկերակիցների հետ միասին սկզբնապատճառ եղան Հայաստանեայց առաքելահաստատ եկեղեցւոյ վերահաստատութեան ի ձեռն Ս. Գրիգոր Լուսաւորչի, միւս կողմից՝ այս վանքի ներկայ խանգարեալ և միանգամայն ամայացեալ դրութիւնը, մենք խնդրեցինք և ստացանք Նորին Վեհափառութիւնից վանահայրութեան պաշտօնը այս վանքի մէջ այն դիտաւորութեամբ, որ ըստ չափու մեր կարողութեան վերանորոգենք և պայծառացնենք սորան։

Ս. Գրիգոր Լուսաւորիչը՝ ամփոփելով Հռիփսիմեանց և Գայիանեանց նահատակների նշխարքները իւրեանց նահատակութեան տեղերում, շինեց նոցա վերայ վկայարաններ 301 թուին, ինչպէս վկայում է ականատես Ագաթանգեղոսը։ Ս. Գայիանէի վկայարանը մնաց իւր նախկին դրութեան մէջ մինչև 630 թուականը, երբ Եզր Կաթողիկոսը տեսնելով սորա նսեմ, խաւար և անշուք դրութիւնը՝ քանդել տուեց այն և նոր ի նորոյ շինել տուեց մեծագիր և գեղեցիկ եկեղեցի կոփածու քարերով, հաստատելով նաև բնակարաններ միաբանութեան համար, ինչպէս վկայում է պատմագիր Յովհաննէս Կաթողիկոսը։ Այնուհետև այս վանքը, շնորհելով որ միանգամայն կից է Էջմիածնին, ամբողջ հազար տարու ընթացքում մնում է առանց խնամքի և վերանորոգութեան, և կա՛մ եղել են աննշան և պատմութեան մէջ տեղ չգտած կարկատաններ։ Ի հարկէ այդպիսի երկարատև միջոցում վանքը չէր կարող մնալ ամուր և չէր, և արդարև, ըստ վկայութեան Առաքել պատմագրի, 17-րդ դարու կիսում սա ներկայանում է եղել կատարեալ աւերակ։ Փիլիպպոս Կաթուղիկոսը, որը գուցէ իրաւամբ կարող էր ստանալ շէնող մականունը իւր բազմաթիւ շինութիւնների պատճառով, ուշ դարձրեց Ս. Գայիանէի վանքի վերա և ըստ ամենայնի վերանորոգեց այն, բարձրացնելով եկեղեցու վերայ միանգամայն նոր կաթուղիկէ կոփածու քարերից 1652 թուին, որոյ մասին վկայում է նոյն Առաքել պատմագիրը։ Յետոյ 1688 թուին Եղիազար Կաթողիկոսը (որ կոչվում է Հռոմկլայեցի) շինեց բոլորովին նոր և գեղեցիկ գաւիթ կից եկեղեցու արևմտեան պատին, հաստատելով երկու ծայրում երկու փոքր սեղան՝ աջակողմեանը յանուն Պետրոս առաքեալի, իսկ ձախակողմեանը Պօղոս առաքեալի, կանգնեցնելով այս սեղանների վերայ երկու փոքրիկ կաթուղիկէ իբրև զանգակատուն։ Նոյն Եղիազար Կաթողիկոսը շինեց նոյնպէս և բնակարաններ միաբանութեան համար, շրջապատելով բոլոր վանքը պարսպով, ինչպէս վկայում է եկեղեցու արևմտեան պատի դրան աջ կողմի արձանագրութիւնը — „Ես Տէր Եղիազար Կաթողիկոս սուրբ Էջմիածնի Հռոմկլայեցի գրով՝ տեսի զամայութիւն սուրբ վանացս որ յանուն սրբուհւոյն Գայիանեայ, շարժեցայ ի գութ հոգևոր սիրով և պարսպեցի զսա որահօք, յարկօք և խցերօք. նաև զգաւիթ եկեղեցւոյս կառուցեալ՝ յաջմէ խորան սուրբ առաքելոյն Պետրոսի և ի ձախմէ խորան սուրբ Առաքելոյն Պօղոսի *), յիշատակ հոգւոյ իմոյ, և ի Հայոց թուականիս ՌՃԼԷ (1688)։ ամէն„։ Զաքարիա սարկաւագ պատմագիրը յիշատակելով միևնոյն շինութիւնները, ասում է թէ Եղիազար Կաթողիկոսը գաւթի հիւսիսային կողմում եղած խորանի (սեղանի) առաջև շինեց և իւր գերեզմանը։

Թէպէտ Էջմիածնայ վանքը ունի իւր համար առանձին գերեզմանատուն, որը աւելի մօտ է նորանից քան թէ Գայիանէի վանքը, բայց վերջին 200 տարու ընթացքում սովորութիւն դարձած է Ս. Գայիանէի վանքի գաւթում թաղել կաթողիկոսները, բացի սմանցից՝ որք թաղուած են ուրիշ տեղերում զանազան պատճառներով։ Այս

---

(*) Պետրոս և Պօղոս առաքեալների (որք նկարած են սեղանների հանդէպ եղած պատերի վերայ) նոյնպէս և սեղանների վերայ նկարած պատկերների աչքերը փորած են, որը ըստ աւանդութեան արել են բարբարոս պարսիկները։

Եկեղեցւոյ դրան աջ կողմը կայ նաև պատկեր յիշեալ Եղիազար կաթողիկոսի։ Ծ. Հ.

վանքի գաւթում թաղուած են վերոյիշեալ Եղիազար, Աբրահամ Բ. Մշեցի, Ղազար Ջահկեցի, Մինաս Ակնեցի, Յակովբ Համախեցի, Սիմէոն Երևանցի, Ղուկաս Կարնեցի, (Յովսէփ Արղութեանց), Դաւիթ Ենաքեթցի և Մատթէոս Կ. Պօլսեցի կաթողիկոսները, որոց տապանաքարերը (բաց ի Եղիազար և Աբրահամի՝ որք կորած են բոլորովին, և Մինասի՝ որի միայն վերջին մի կտորն է մնացել) և այժմ կան իւրեանց արձանագրութիւններով։

Եղիազար Կաթողիկոսից յետոյ Ս. Գայիանէի վանքը, ինչպէս երևում է, դարձեալ մնացել է միանգամայն առանց վերանորոգութեան և խնամատարութեան համարեա 200 տարու ընթացքում, ուստի վերջին ժամանակներս վիմարին հասել էր խարխալեալ և ամայացեալ դրութեան։ Բաւականին ընդարձակ և գեղեցկաշէն եկեղեցու կաթուղիկէի մի մասը և մի քանի կամարները ճաքճաքած են համարեա թէ վտանգաւոր կերպով, պատերը ներսից և դրսից խանգարուած են, քարերից շատերը տեղից շարժուած և մի քանիսը թափած։ Եկեղեցու մէջ տիրապետում էր սաստիկ խոնաւութիւն և մթութիւն, որովհետև ունէր միայն հինգ—վեց մանր պատուհաններ, իսկ մնացածները շարած էին, որևէ երկիւղի պատճառով։ Վանքը չունէր ոչ մի բնակարան բաց ի մի քանի մութ և խախտուած սենեակներից, իսկ արտաքին պարիսպը խարխալուել էր և տեղ տեղ փլել, և որովհետև այս վանքը չունի ոչ կալուածք և ոչ արդիւնք ժողովրդից, ուստի սորա վերջին վանահայրերը թուի թէ անձեռնհաս են եղել անել որ և իցէ վերանորոգութիւններ։ Նոյն իսկ եկեղեցու մէջ չկար ոչ միայն շքեղութեան զարդեր, այլ մինչև անգամ ամենահարկաւոր իրեղէններ՝ զգեստք, պատկերք սրբոց, ևլն. իսկ բնակարանը բոլորովին առանց կահ ու կարասիքի էր։

Այսպիսի խեղճ վիճակի մէջ գտնելով Ս Գայիանէի վանքը, մենք մեր վանահայրութեան երկամեայ միջոցում թէպէտ կարողացանք փոքր ի շատէ վերանորոգութիւն տալ սորան, զոր օրինակ շարածները բացարինք և մեծացրինք եկեղեցու մէջ 18 հատ մեծադիր լուսամուտներ երկաթի վանդակներով, երկաթաթելի (մալթուլ) ցանցերով և ապակիններով, նորոգեցինք հարաւային պատի մի մասն՝ որը չափազանց խախտուած էր և քարերը թափել էին, և ներսից տուինք եկեղեցուն մասնաւոր պայծառութիւն հոյակապ բիւրեղեայ ջահով, կարևոր պատկերներով, խաչերով, զգեստով, զանգակով ևլն. իսկ վանքը շրջապատեցինք հիւսիսային—արևելեան կողմից բոլորովին նոր պարսպով (որոյ ծախքը վճարից Էջմիածնայ վանքը), և արևելեան խարխալուած պարսպի մի մասը կարկատելով և միւս մասն բոլորովին նորից շինելով մեծադիր գըներով, վերցրինք խարխալեալ շինութիւնքը և շինեցինք բարեվայելուչ բնակարան վանահօր համար չորս սենեակից իւր բոլոր կարևոր կահ և կարասիքով, և փոքր դպրոց նոյնպէս չորս յարմար սենեակից, ևլն։ Թէպէտ կարողացանք պատրաստել այս բոլորը, բայց այնու ամենայնիւ թէ եկեղեցին և թէ վանքը դեռ ևս ունին չափազանց շատ պակասութիւններ։ Եւ որովհետև վերոյիշեալ վերանորոգութիւնները մենք կարողացանք կատարել Վեհափառ Հայրապետի հրամանով Էջմիածնայ Գանձարանից մեզ յատկացրած ժամանակաւոր սննդազրամով *) և մանաւանդ ազգասէր և բարեպաշտ ազգայնոյս ջերմեռանդ և առատաձեռն նուիրաբերութիւններով, ուստի մատուցանելով նորին Վեհափառութեան մանրամասն հաշիւ արդեանց և ծախուց, ընդ նմին մեզ համար սեպուհ պարտաւորութիւն ճանաչեցինք հրատարակել այն և ի գիտութիւն ազգայնոց, և մանաւանդ Աստուածասէր նուիրատուաց, մատուցանելով նոցա մեր հրապարակական անկեղծ և ջերմեռանդ շնորհակալութիւնը և բարեմաղթելով Ս. Գայիանէ կուսից՝ որ բարեխօս լինի Ամենակարող Բարձրելոյն առաջև, որպէս զի Նա վարձահատոյց լիցի նոցա աստ և ի հանդերձելումն։

---

*) Նորին Վեհափառութեան բարեհաճութեամբ և Սինոդի որոշութեան զօրութեամբ մենք պիտի տանք Էջմիածնի գանձարանից սնդզապրամ տարեկան 600 րուբ. արծ. չորս 1) տարու ընթացքում, սկսեալ ի 1 էն մարտի 1872 ամի։ Նաև մեր ձեռքին թողած է Գայիանէի վանքին պատկանած մի հատ այգին։ Ս. Հ.

(1) Անցեալ Ամսագրոյն մէջ փոխանակ չորսի սխալմամբ երեք գրուած է։ Ս. Խմբ։

ՄՈՒՏՔ ԵՒ ԾԱԽՔ Ս. ԳԱՅԻԱՆԷԻ ՎԱՆՔԻ

Ի 1-էն Մարտի 1872 ամի ցվերջ 1875 ամի.

| ՄՈՒՏՔ | Ռ. Կ. |
|---|---|
| Սինոդական Էջմիածնի Գանձարանից | 1146 — |
| Նուէրք ժապաւինեալ մատեանով | 1171 — 29 |
| Մոմագին, խաչահամբոյր, ժամոց ևլն. | 331 — 92 |
| Արդիւնք այգւոյ | 145 — 55 |
| Ուսման վարձ աշակերտներից | 196 — 69 |
| Փոխարինաբար Էջմիածնի գանձարանից | 200 — |
| Գումար մուտից | 3191 — 45 |

ԾԱԽՔ

Եկեղեցւոյ նորոգութեան և ներքին պայծառութեան վերայ։

| | |
|---|---|
| Եկեղեցու 18 հատ պատուհաններն իւր բոլոր պարագաներով | 284 — 5 |
| Եկեղեցու հարաւային պատի կարկատանք | 109 — 99 |
| Եկեղեցու ներքին պայծառութեան համար զգեստներ, պատկերներ, սկիհ, աւետարան, մի մեծ ջահ (150ր.) զանգակ և այլ պարագայք. | 455 — 93 |
| | 850 — 47 |

Բնակարանի և դպրոցի շինութեան վերայ։

| | |
|---|---|
| Շինութիւն բնակարանի և դպրոցի և արտաքին պարսպի | 994 — 37 |
| Բնակութեան համար ամենայն տեսակ կահ և կարասիք | 227 — 21 |
| | 1221 — 58 |

Այգու վերայ։

| | |
|---|---|
| Ամենայն տեսակ ծախք այգու վերայ | 152 — 96 |

Տնտեսական կառավարութեան վերայ։

| | |
|---|---|
| Հանդերձք, անկողինք և սնունդեղէնք | 696 — 28 |
| Ռոճիկներ դպրոցի վարժապետին և ծառաներին | 270 — 16 |
| | 966 — 44 |
| Գումար ծախուց | 3191 — 45 |

Վանահայր Ս. Գայիանէի վանից
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆՑ.

Ի 21ն Յունվ. 1874 ամ.

## Ի ԳԱՆՁԱԿԷ

Կարդալով Մշակ լրագրի 34. 35 և 49 համարների Մաժակ ստորագրութեամբ նամակները՝ որոց առաջին երկու համարները Գանձակից ուղարկուած, իսկ վերջինը որպէս թէ Դարբանլից՝ նոյն իսկ Մաժակն Դանիէլեանց ձևակերպեալ, շատ ցաւեցոյց մեզ և առհասարակ մեզպէսի բազմաթիւ Գանձակեցւոց սրտերը. ուստի խնդրեմ այս իմ մի քանի տող գրութիւնս արժան համարէք ձեր ազգօգուտ Արարատ ամսագրոյ էջերի մի անկիւնում տեղաւորել. Զնայելով որ, ինչպէս լսում եմ, շատ անգամ մի քանի երիտասարդներ նորա դէմը գրելով ուղարկել են Պ. Մշակի խմբագրին տպելու, բայց մեր պարոնը, իւր մտաց մէջ հաստատ դնելով, որպէս զի Հայոց հոգևորականութիւնը խայտառակէ . . . . . և վասն այն արժան չէր համարել տպելու, կամ լաւ ևս ասել, իւր գաղափարին և մտաց ճաշակին յարմար չգտնելով՝ զանցառութեան էր տուել, ի հարկէ չեմ մեղադրում Մշակին, որովհետև աշխատում է իւր նպատակին հասնելու։ Առածն էլ ասում է, որ սպիտակ շունը բարեկամ գայլին փեսա է, ուստի պատճառներ ունէր Մաժակի գրութիւնները տպելու, իսկ նրանցը՝ ոչ, իրեն յայտնի պատճառաւ. Վերջապէս 34 համարում պարոն Մ. ուսումնարանի հարցաքննութեանց մասին խօսելուց յետոյ աւելացնում է թէ՝ «մեր Եկեղեցւոյ երեցփոխան . . . . . եանցը ստիպուած ինչ ինչ հանգամանքներից արձակուրդ է խնդրում և վերջը խորհուրդ է տալիս Հոգևոր կառավարութեան այդ բանի առաջը առնել»։ Ճշմարիտ է Պ. Մաժակ, ես էլ համաձայն եմ ձեզ հետ, որ Պ. . . . եանցը արժանաւոր մարդ էր երևում նախ քան այդ պաշտօնը յանձն առնելը և մենք շատերս յոյս ունէինք՝ որ նա եկեղեցւոյն շատ օգուտ պիտի տար, բայց նորան ո՞վ ստիպեց այդ պաշտօնից հեռանալ՝ եթէ ոչ նորա փոփոխական բնութիւնը։ Միտդ գալիս է այն օրերը, երբ ցանկանում էին նորան դէպուտատ ընտրել, հրաժարուեց ասելով՝ ես պէտք է հոգաբարձու լինեմ. երբ հոգաբարձու ընտրուեց՝ հրաժարուեց ասելով՝ թէ ես . . . . իշխին հետ չեմ կարող կա-